

ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պ. Դումայի լոնսթրուկցիոնների շուրջը:

Նիդախ ճակատամարտի մէջ ջախջախուեց ռուսաց յեղափոխութեան «աւանգարդը» և ըէակցիան սանձարձակ բարբարոսութեամբ սկսեց տօնել իր յաղթանակը, աւեր ու մահ տարածելով բազմաչարչար երկրի գիւղերում և աւաններում: Շմիդտի տրագիկական մահը և Սպիրիդոնովայի գերմարդկային տանջանքները միայն չափազանց աչքի ընկնող անցքերն էին հազարաւոր նման դէպքերի, պատահած անյայտ մարդկանց նկատմամբ: Եւ ռուս յեղափոխութեան «աւանգարդը»՝ ս. դ., իր իդէալական ու դեորութեան մէջ մոռացաւ այն ըէալ հողը, այն մատերիալիստական տեսակէտը, որ նրա աշխարհայեացքի հիմքն էր կազմում, և կարծեց թէ դարերի ընթացքում դանդաղօրէն զարգացած յեղափոխութեան առաջին ծնունդը կարող է այլ բան տալ, քան լաւագոյն դէպքում բուրժուական-դեմոկրատիական սահմանադրութիւն: Նա մոռացաւ որ տասնեակ տարիների անդու աշխատանք է պահանջոււմ, որպէսզի ոյժերի իրական յարաբերութիւնները փոփոխուեն և առաջանայ երկրորդ ծնունդը—դեմոկրատիայի աւելի կատարեալ տիրապետութիւնը: Նրանք մոռացած որ լոկ կամքը, հաճոյքը, մի խումբ դաւադիրները զինուած ապստամբութիւնը նոյնքան անզօր են այդ դէպքում, որքան բռնի միջոցները՝ ստիպելու որ ծննդկան կիւնը մի երկունքից յետոյ իսկոյն լոյս աշխարհ հանի ճնշման տակ երկրորդ մանուկը...

Յիրուցան եղած, ջարդուած աւանգարդի տեղը ըռնեց անմիջապէս նրա յետևում կանգնած «ժողովրդի ազատութեան» կուսակցութիւնը, որ, իր շուրջ ժողովելով ընդդիմադիր ոյժերը իր դաւանած գէնքերով առաջ մղեց կռիւը բիւրօկրատիայի դէմ: Այդ, «թշնամու» դէմ էլ, ի հարկէ, լարեց իր ըլլոր ոյժերը, ըէակցիօն-բիւրօկրատիան, հալածելով ազատ մամուլը, փակելով ժողովումները, արգելքներ դնելով ազատ ընտրութիւնների առջև, բանտարկութիւնների և աքսորի մատնելով աչքի ընկնող

Մարտ, 1906.

գործիչներին: Եւ ուստի հասարակութեան ահագին մեծամասնութիւնը, եթէ պատրաստ չէր սոցիալ-դեմոկրատներէի ետեւից գնալու, յամենայն դէպս հասունացած էր կոնստիտուցիօն-դեմոկրատիական ծրագրին յարելու, ուստի ընկերացիան անկարող եղաւ խեղդել այդ պրոգրեսսիւ շարժումը: Եւ առաջին անգամ Ռուսաստանում կատարուող քաղաքական ընտրութիւնները բացայայտ կերպով ապացուցին այդ ճշմարտութիւնը, չնայած որ Յայրայեղ յեղափոխականները չուզեցին աջակցել իրանցից աջ գտնուող կուսակցութեան և բոյկոտ յայտարարեցին այդ ընտրութիւնների դէմ:

Առ 20 մարտի 1139 ընտրուածներէց 348 հոգի պատկանում էին ժողովրդական ազատութեան կուսակցութեան. 105 աւելի չափաւոր լիբերալներին, իսկ կենտրոնը—հոկտեմբերն 17-ի կուսակց.—գրաւել էր միայն 155 ձայն, նրանից աջ գտնուող առևտրա-արդիւնարերական կուսակցութիւնը 53 ձայն, առաւել ևս ողորմելի էին պահպանողական կուսակցութիւնների յաղթանակները: Պէտք է այն էլ նկատել որ ընտրուածներից 308 «անյայտ ուղղութիւն» բաժանմունքի մէջ են ընկել. մինչդեռ ակներև է որանց, գէթ ահագին մեծամասնութեան, ձախակողմեան համակրանքները, որ քաղաքական միտումներով ստիպուած ծալուած են պահում:

Մեր տեսակէտը ընտրութիւնների հարցում պարզել էինք յունուարի համարում.

«Սոցիալ-դեմոկրատիական բեմի լիակատար հաղթանակում կեանքի մէջ—ահա առաջին նպատակը, որին պէտք է ձգտեն դեմոկրատիական բոլոր կուսակցութիւնները, չլքատելով, չպառակտելով իրանց ոյժերը՝ բիւզանդական ազանդատների նման, որոնք դոգմատիկ նրբութիւնների վէճերով էին զբաղուած այն ժամանակ, երբ Պոլսի պարսպների գրոտում օսմանեան բանակն էր կանգնած... Պրոգրեսսիւ բոլոր ոյժերի դաշնակցութիւն՝ սահմանադրական կարգերը Ռուսաստանում հաստատելու նպատակով—ահա միացած ոյժերի ընդհանուր դրօշակը: Եւ մեզ թւում է թէ այդ հարցում նախաձեռնութիւնը պէտք է իր վրայ վերցնի սահմանադրական-ժողովրդավարական կամ ինչպէս այժմ աւելացնում է «ժողովրդական ազատութեան» կուսակցութիւնը, որ իր ծրագրով միացնում է ինտելիգենցիայի, գիւղացիութեան և բանուորակահոթեան շահերը և զանազանում է ձախակողմեան ծայրայեղներից աւելի իր տակտիկայով, քան նպատակների էական տարբերութիւններով. եթէ կամիք այդ կուսակցութիւնը աւելի ճշտ կը լինէր բնորոշել «սոցիալ-էվոլյուցիօնիստական» անունով... Միացած ոյժերով այդ ձախակողմեան միութիւնը (բլոկը) կարող էր ժողովրդի մէջ եռանդուն պրոպագանդա անել ընտրողական պայքարի ժամանակ և ուղարկել Պետական Դուման ժողովրդի շահերին նուիրուած այնպիսի հեղինակաւոր ներկայացուցիչներ, որոնցով այնքան հարուստ է առևտրական ինտելիգենցիան: Մի կողմ թողնենք վերաւորական շրջանում ածականը Սարգսյանների, Միլիկաֆների նման անձանց նկատմամբ. մի կողմ թողնենք նեղ կուսակցամոլու-

Քիւնը և ղոկարինեօրութիւնը այս պատմական լուրջ մոմէնտում: Պէտք է հասկանալ կեանքի բիւրա լոգիկան և հասուն ու առողջամիտ հայեացքով չափել ըէալ դժուարութիւնները: Զայրոյթից ատամներ կը հտել կամ խռով-կան վերաբերմունք ցոյց տալ «ոչ ծայրայեղներէ» տակաւկային և փրկու-թիւնը սպասել միայն սպաստամբական բռնկումից—նշանակում է լըջու-թեամբ չկշռել իրական պայմանների դրած խոչնդոտների համադումարը: Մենք հաւատում ենք որ ձախակողմեան բոլոր միացած ոյժերը, եթէ նպա-տակ գնեն՝ բոլոր եռանդով նուիրուելու ընտրողական պայքարին, կարող են աշողութիւն ունենալ, որովհետեւ նրանց օտի տակ է այնպիսի ամուր հող, ինչպիսին է աշխատող մասսայի շահերը և առհասարակ արդարութիւնը:

Սակայն «ծայրայեղները» այլ տակտիկա ընդունեցին, որ անխնայ ըննադատութեան ենթարկուեց և ուռւ սոցիալ-դեմոկ-րատների ամենախոնոուն և հեղինակաւոր անձի՝ Պլեխանովի կողմից. իր Дневникъ социаль-демократа № 5 գրքոյի մէջ նա մատնացոյց է անում մի քանի իրողութիւնների վրայ, որոնք ցոյց են տալիս թէ ինչ մեծ հաւատով են վերաբերում Դումային նոյն-իսկ դարգացած գիւղացիները: «Այդ հաւատի ներկայութեամբ ընտրութիւնների վերաբերմամբ բոյկոտը մեր կուսակցութեան կողմից, ասում է նա, կոլոսալ սխալ է: Դուման բոյկոտ անե-լու վրայնայել իբրեւ ինչ որ տակտիկական արժատականութեան արտայայտութեան վրայ՝ կարող է միայն նա ով չի հասկանում թէ ինչու մէ է կայանում մարքսիստների արմատականութիւնը: Այն տակտիկան որ պաշտպանում են մեր «մեծամասնականե-րը» (БОЛЬШЕВИКИ) իր վրայ կրում է պարզ հետքեր մանր-բուրժուական իդէալիզմի և մանր-բուրժուական կեղծ-յեղափո-խականութեան» *)... Մինչև այժմ այդպիսի ածականներով միլըր-տում էին ուռւ «սոցիալ- դեմոկրատները» այն բոլոր սոցիա-լիստներին և դեմոկրատներին, որոնք չէին ընդունում իրանց բարացած դոգմատիզմը և միակողմանի անհամբերողութիւնը, այդ «ուղղահաւատներին» այժմ նոյն արհամարհական ածականներն է տալիս բանտորականութեան այնպիսի պատկառելի պարա-գլուխ, ինչպիսին Պլեխանովն է, որ իր դարգացմամբ չի կարող Մարքսի անունը շահագործել ամեն տեսակ քեալլագեօղութիւն-ներ արդարացնելու համար... Թէ ինչ կ'ասէր մեր պայմանե-րում ինքը Մարքսը՝ այդ ևս դժուար չէ եզրակացնել, կարդալով նոյնիսկ այն, ինչ գրել է նրա կենսագրական տեսութեան մէջ նոյն այս համարում մեր աշխատակից պ. Բ. Իշխանեանը. կը ցանկայինք որ մեր ընթերցողները ուշադրութեամբ կարդային Մարքսի ըննադատական տողերը՝ ուղղած 1848 թուականի կոմ-

*) „Тактика, отетаиваемая нашими“ большевиками „послать на себя ясные сказы мелко-буржуазного идеализма и мелко-буржуазной псевдо-революционна“.

մունիստների տակտիկայի դէմ: Նոյն հարցի պարզաբանութեան կ'օգնի և այս համարի պարբերականում զետեղած քաղաքակաները («Пол. Зв.» հրատարակութիւնից: Մշուշը պէտք է փարատուի մեր լաւ տղերանց գլուխներէրից...)

Իր տակտիկական սխալները արդէն սկսել է հասկանալ ս.-դ. «փոքրամասնականների» ֆրակցիան, որ վերջերուս կայացած իր մի որոշման մէջ ասում է.

«Ներկայ պատմական մոմենտում ս.-դ. ամբողջ տակտիկան պէտք է յարմարեցնուի անհրաժեշտութեան հետ՝ լայնացնել և ամրացնել պրոլետարական մասսաների կազմակերպութիւնը քաղաքական և տնտեսական հողի վրայ... Պէտք է նեցուկ լինել բուրժուական դեմոկրատիայի այն դիմադիր և յեղափոխական քայլերին, որոնք չհակասելով մեր ծրագրային պահանջներին, կարող են նպաստել նրանց իրագործման և ելակէտ հանդիսանալ յեղափոխութեան յարաճուն զարգացման» («Молва», 22 մարտի):

Առհասարակ շատ բան այլ կերպարանք կը ստանար եթէ հոկտեմբերի 17-ից յետոյ չլինէին ս.-դ. բազմաթիւ տաքտիկական սխալները...

«Ժողովուրդի ազատութեան» կուսակցութիւնը այդպիսով միակն եղաւ արմատականներից, որ հասկացաւ պատմական մոմենտի պահանջը և, ղեկավարուելով իր փորձուած և շիտակ պարագլուխներից, իրականութեան ամենասոսկալի պայմաններում կարողացաւ շարունակել ընդդիմադրութիւնը բէակցիօն-բիւրօկրատիային և նրան համակրող կուսակցութիւնների հակաազատական ջանքներին: Այն փառաւոր յաղթութիւնները որ տարան կ.-դ.-երը Ռուսաստանի սիրտ Մոսկուայում և բիւրօկրատիայի բաստիլիա Պետերբուրգում՝ ահագին բարոյական նշանակութիւն պիտի ունենան ազատութեան համար կոռուդներին խրախուսելու մտքով: Ռուսաստանի հասարակական կարծիքը ճշդ դեմաւանդութեամբ իր հաւանութեան քուէն տուաւ Վիտտէ-Դուրնովօի կառավարութեան դէմ խիստ թշնամական դիրք բռնած այդ քաղաքական կուսակցութեան, լաւ գիտնալով որ կօնստ.-դեմօկր. գնում են Պետական Դուման ու այն նպատակով որ ժողովրդի ներկայացուցչութիւնը հլու գործիք դարձնեն իշխանութեան ձեռքում, կամ իրանց համակերպումներով բարձրացնեն եւրոպական բանկիրների աչքում կռավարութեան վարկը: Հասարակութիւնը լաւ է ճանաչում այդ Ստրուվէներին, Միլիկոֆներին, Բադիշչեֆներին, Գիսսէներին և Տիսլենկօսներին, —բոլորն էլ նախկին «օսովոբոժեհնցիներ»—, և գիտէ որ նրանք ընդունակ

կը լինեն պաշտպան կանգելու ժողովրդի իրաւունքի և արդարութեան: Ժողովրդի ընտրողական քուէներով լիազօրութիւն ստացած՝ նրանք բարոյական հեղինակութիւն կ'ունենան հնչեցնել ռուս ժողովրդի խօսքը, քաղաքացիական և քաղաքական ազատութեան երաշխիքներ պահանջել: Մի կուսակցութիւն, որ իր թեկնածուների ամբողջ ցուցակը (160) ահապէս մեծամասնութեամբ անցնում է Վիտտէ-Դուրնովօի աչքերի առջև Պետերբուրգում՝ իրաւունք ունի պահանջել որ հեռանայ և պատասխանատուութեան ենթարկուի այն կառավարութիւնը, որ սևացրուեց հասարակական քուէներով: Երբ հասարակութիւնը Դումա է ուղարկում մեծամասնութեամբ ընտրած օպպոզիցիան, ի՞նչ լողիկայով, ի՞նչ բարոյական հիմքերով կարող են զօռով իրանց դիրքերն պահպանել վստահութիւնից զրկուած, դատապարտուած մինիստրները: Այդ դատապարտութիւնը աւելի ևս նշանակելի է դառնում նոյնիսկ այն տեսակէտով, որ ընտրողական ներկայ սիստեմը, չնայած բիւրօկրատիայի բոլոր հնարադէտ խեղաթիւրումներին, այնուամենայնիւ սև քուէ դուրս բերաւ Վիտտէ-Դուրնովօի դէմ... Կառավարութիւնը անշուշտ կը ցանկար որ դարձեալ մէջ խառնուէին տաք գլուխ ծայրայեղները՝ «զինուած ապստամբութեան» և շինծու «գործադուլները» խաղերով, որպէսզի իր օձիքը ազատի այս խաղաղ, սակայն ահապէս բարոյական ոյժ և ժողովրդական համակրանք կրող կ.դ.ների կռուից, որ երկաթէ օղակով շրջապատուած է Վիտտէ-Դուրնովօի մինիստրութիւնը և փախուստի ոչ մի ելք չթողնելով, ստիպում անձնատուր լինել: Արդէն պրովոկատորական լուրեր են սկսել տարածել, իբր թէ նոր գործադուլներ են պատրաստուում. այդ լուրերի նպատակները բարեբախտաբար հասկանում է հասարակութիւնը: Միւս կողմից լուրեր են տարածում որ Վիտտէն ճիւղանդութեան պատճառով՝ պէտք է թողնի մինիստր-նախագահի պաշտօնը...

Լ. Ս.

Մարտի 25-ին: